Օ՛ այս պտոյտը, գոր մեր բանաստեղծութեան պարտէսին մէջ կը կատարենք, ամէն քայլափոխին նորանոր պարտէսներ բանալով մեր առջեւ: Հո՛ն են մեր փոքրիկ աճուկները բոլոր հակները, բոլոր ժամանակներու քերթողները, երգիչներն ու տաղասացները, աշուղներն ու ասմունքողները, որոնք տարօնցի մեր վարդապետին, Մեսրոպ Մաշտոցին կերտած ափ մը տառերը ցանած են ու ցորեաններու ովկիանոսներ հնձած են անոնցմէ:

Երբ կը պտոյտիք անոնց ստեղծած ցորեաններու ովկիանոսին մէջ, երբ մեր լեզուին վրայ ու մեր ականջներուն մէջ կը հնչեցնենք մեր բանաստեղծներուն հիանալի բառերն ու ձայները, ափսո՛ս հազար անգամ ափսոս, հարց կու տանք, թէ քանի՞ հոգի մեզի հետ միասին ականջ կու տայ անոնց: Կախարդուած հոգեվիճակով ման կու գանք մեր բանաստեղծութեան պարտէսին մէջ, եւ կասկածանքով երբեմն մեր ետին կը նայինք, տեսնելու համար թէ քանի՞ հոգի կը հետեւի մեզի, կամ քանի՞ հոգի մեզմէ անկախ կերպով կը շրջի այս պարտէսին մէջ: Դաժան ճակատագիր: Պարտէզը ամառի է: Բանաստեղծները առանձին մնացած են, անոնց գործածած բառերը մաշիլ սկսած են, օտարանալ սկսած են մեր ժողովուրդին նորահաս գաւակներուն համար:

Բայց այս պարտէզը սովորական պարտէզի չի նմանիր: Անգամ մը ծաղկած է, այլեւս կը մնայ: Նոյնիսկ եթէ ամառներ ամբողջ մէկ հոգի իսկ չմտնէ այս պարտէզէն ներս, նոյնիսկ եթէ մէկը չնշնայի սա կամ նա ծաղիկին գլխի տուրմունքը, նոյնիսկ եթէ պարտիզական մը տարիներ շարունակ կաթիլ մը ջուր չտայ այդ ծաղիկներուն, կամ չմշակէ զանոնք, անոնց արանքէն չփրցնէ վայրի խոտերն ու փուշերը, պարտէզը ստեղծուած է անգամ մը ու կը մնայ: Մարդիկ կ'անցնին-կ'երթան, պարտէզը կը մնայ: Եւ քանի որ կը մնայ, օր մը անպարտէս մարդիկ դարձեալ կը սկսին մտնել հոնկէ ներս:

Պարտէզը կայ ու կը մնայ: Մեր բանաստեղծները հո՛ն են, դասական կամ ժամանակակից, պարող կամ մեռեալ: Հինները նոր խօսք չեն ստանալ, Մուսայէն, բայց ամէն օր կը գրուեն Մուսային հետ: Նորերը դեռ կը սիրաբանին իրենց Մուսային հետ եւ ամէն օր

չունչ մը կը ծծեն անկէ:

Դիւրին էր բանաստեղծ ըլլալ: Ծատեր իրենց կեանքով վճարեցին բանաստեղծ ըլլալու իրենց ճակատագիրը: Ծատեր գլխից ցերեկ գալարուեցան երկունքի ցաւերով: Բայց որքան ցաւ, այնքան երջանիկ ստեղծագործութիւն:

Այսպէս էր, որ մեր բանաստեղծութեան ամէնէն ազնուական ասպետներէն մէկը, Դանիէլ Վարուժան, ասպարէզ կը կարողար Մուսային եւ կ'ուզէր անպայման տէր կանգնիլ քերթութեան քնարին: Մուսային կը զգուշացնէր, կ'ուզէր բացատրել թէ որքան տխուր ճակատագիր է բանաստեղծին ճակատագիրը: Բայց բանաստեղծը կը մնար անզրկուելի: Եւ ասիկա առաջին քայլն էր անմահ բանաստեղծին.

«Ի՛նչ, այս քնար կ'ուզէր, քնար սեւ փայտէ -
այս վերքերու գործիք մըն է, այս է հուր.
ապագադ է, այս դագաղդ է, անուցդ է»:

Ես անյողողող ըսի անձր:
- Ըլլայ, տո՛ւր:

Թող ըլլայ՛, հոգ չէ՛: Թող վէրքերու գործիք ըլլայ,
կրակ ըլլայ, նոյնիսկ դագաղ ըլլայ, հոգ չէ՛, տուր ինձ
ծի այդ քնարը:

Դանիէլ Վարուժանի հետ այսպէս ըսին մեր բոլոր բանաստեղծները եւ իրենց Մուսային ձեռքէն առին սեւ փայտէ քնարը: Թերեւս նոյն փայտէն շինուած էին երկուքն ալ, քնար եւ դագաղ: Բայց ի՛նչ փոյթ: Մինչեւ որ քնարը դագաղի վերածուէր, ամէն ձեռքի մէջ պիտի հնչեցնէր տարբեր մեղեդի մը, տարբեր երգ մը, կարծես երկինքէն իջնող մրմունջ մը, որ պիտի արբեցնէր հայ գիրի սիրահարները, հայ բանաստեղծութեան երկրպագուները:

Փառք ու պատիւ բոլոր այն բանաստեղծներուն, որոնք մեր ժողովուրդը ազնուացուցին իրենց արուեստով ու ներշնչումներով: Անոնց ստեղծած պարտէզը այսօր շատ ընդարձակ է, մարդու մը կեանքը չի բաւեր, որպէսզի կարենայ շրջիլ մէկ ծայրէն մինչեւ միւսը, բայց ի՛նչ երջանկութիւն՝ հոս կամ հոն կանգնիլ, նայիլ, թիչ մը աւելի մօտենալ, հիանալ, ուրախանալ, հպարտանալ, երկու քայլ եւս առնել, աղէն - ձայնէն հասնող մրմունջներու ու երգերու ականջ տալ, երբեմն միանալ այդ երգերուն, մտքին մէջ ձայն մը պահել այդ երգերէն, անգիր սովորել, կրկին ու կրկին արտասանել եւ...
... Արտասանել անոնց գեղեցկութեան դիմաց:
Կ'արժէր, ամէն կիրակի Ս. Պատարագի ընթացքին, Պատարագի մը իր սովորական աղօթքին մէջ ինչէր նաեւ մեր գրականութիւնը եւ ըսէր -
- Տէ՛ր, փրկէ՛ ազգս հայոց,
եւ պահէ, պահպանէ պարտէզը՝
ազգիս բանաստեղծութեան:

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

● Հինէն ի վեր համոզուած եմ, որ գրողը պէտք է համարձակ պտոյտի գրական սեւերու միջեւ, մէկէն միւսը անցնի հանգրտօրէն: Ինքզինքը չնկատէ միայն այս կամ այն սեռին մարդը: Բոլոր այն սեռերը, որոնք հաւաքուած են արձակ գրականութեան անուան տակ, դուռ կը բանան իրարու, նոյն շէնքին զանազան սենեակներն են:

● Կը խորհիմ, թէ ոչ մէկը պիտի պնդէ, թէ բարգաւաճական գրակաւորութիւնը կենսական կարեւորութիւն չունի մեր գրականութեան գոյատեւման համար: Թարգմանական գրակաւորութեան իրրեւ մէկէն ջերմ պաշտպաններէն մի՞նչ կ'ըսես, թէ գործ մը բարգաւաճելու վրէժն արձանաբանութեան վրէժն է, որքան գործ մը արտադր-



րելը: Արժեքաւոր եւ պատուաւոր մա՛նաւանդ անոր համար, որ ապերախտ աշխատանք է նոյն ատեն:

● Իրական կեանքէն եկող ներշնչումները արժանի չափով կ'արժէքաւորուին այն ատեն միայն, երբ անոնք կը ճոխանան ներքին կեանքի, հոգեկան կեանքի տրեւայններով: Իմ ստեղծագործական գրականու-

թիւնը իրեն կորիզ ունի հոգեկան կեանքը, որ թեւեւ առաջին ակնարկով իրական կեանքէ անջատ ըլլալ կը թուի, որ սակայն իրականութեան մէջ անոր շարունակութիւնն է մարդէն ներս:

● Ներքին կոչում մը երբեք առանձին չի կրնար թողնուլ գրողը իր եսին հետ: Ամէն ներքին կոչում պայմանաւորուած է դուրսէն եկող բանէ մը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ գրական դպրոցի մը, գրական ճաշակի մը ազդեցութիւնը: Կայ մէկը, որ գերոյնէն ցամաքային ըլլայ: Կարեւորը բան մը աւելցնելու է այն ազդեցութեան վրայ, որ մեզ ցամաքային հանցած է, եւ մեծ ենք այն չափով, որ յաջողած ենք աւելցնելու այդ բանը:

Ռ. Հ.

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՔԵՐ

ՀԵՏԱԲՐՔՐԱԿԱՆ ԿԱՆԳԱՌՄԸ «ՄԵՆՔ» ԿԱՅՔԸ



Հայրենի www.menq.am հասցեով համացանցի կայքը բոլոր տեղաբնակները ունի այցելուները գոհ պահելու արդիական կառույց, շահեկան և այլազան ներթեր, ժամանցի բաժին:

Կայքին «Թերթերի ելեկտրոնային կրպակ» բաժինը կը ներկայացնէ «Հայկական ֆուրբալո», «Երկիր» և «Իրաւունք» թերթերուն ներթերը:


Յատկապէս հետաքրքրական է «ուսումնական ծրագիր» խորագրեալ բաժինը: Այստեղ, «այրենարան» ենթագլուխին տակ ներկայացուած է հայկական այլոթերը, իւրաքանչիւր տառին վրայ «քիթ» ընելով այցելուին դիմաց պիտի բացուի լատենտական ցուցադրութիւն մը, որ կը ներկայացնէ տառը թուանշարնային, երաժշտութեան և սահիկներու ցուցադրութեան ընդմէջէն:

Ուշագրաւ է նաև «խաղեր» բաժինը, ուր այցելուին կրնայ փորձաքարի գարնել խառն գիրերով բառակազմութիւն կատարելու իր կարողութիւնները:

Այս ենթաբաժինը կ'ընդգրկէ նաև հայերէնէ ուսանելի և ուսուցիչներէ հայերէն բառարան մը:

Երեւանի և դէպի Երեւան թռիչք կատարողներուն յատուկ օգտակարութիւն ունին «Ձուարթնոց» օդակայանին ժամանումի և մեկնումի թռիչքներուն ժամանակացուցը: Ինչպէս նաև՝ Հայաստանի տարբեր շրջաններէն դէպի «Ձուարթնոց» տարող քարներուն թիւերն ու կանգառները ներկայացնող բաժինները:

«ԼԱԻ ԼՈՒՐԵՐ» ԲԵՐՈՂ ԿԱՅՔԸ՝ «ԿՈՒՏ ԹԻՆԿՁ»



Եթէ պայթումներու, քաղաքական ոչ այդքան մաքուր խաղերու, այցելութիւններու և ձեռքբերումներու մասին օրն ի օրն տեղացող լուրերէն և լրատուութիւններէն յոգնած էք, այցելութիւն մը www.goodthings.com կայքը կրնայ, գէթ ժամանակաւորապէս մեղմացնել ձեր աօրեայ տաղտուկը:

«Կուտ քիմկզ կայքը պատրաստեցինք, որովհետև կը հաւատանք, թէ մարդիկ հետաքրքրական, հիանալի, լիայտու և հզօր են ու բաւարար տեղեր չկան, ուր մարդոց շինիչ մտածումներն ու գործերը կ'արտայայտուին», կ'ըսէ կայքին հիմնադիրը՝ Պարսի Ֆիշըրը:

Նոյնմէր 2000էն ի վեր գործող այս կայքը կ'ընդգրկէ շարք մը «լաւ» բաներ, ինչպէս՝ «լաւ լուրեր», «լաւ գործեր», «լաւ մարդիկ» և այլն... Աւելի քան 60 հազար «լաւ» մարդիկ բաժանորդագրուած են անոր շարքածական դրութեամբ Ե-նամակի միջոցով ուղարկուող յանդիմանները: «Բարի նամակ կը կոչենք զայն. ամէն Հինգշաբթի իրիկուն կամ Ուրբաթ առաւօտ այս 60 հազար անհատները կը բանան «լաւ նամակ» մը և կը կարգան աշխարհին բարիք բերող բանի մը, անձի մը կամ կազմակերպութեան մը մասին», կ'ըսէ Ֆիշըրը:

Կայքը նաև մարդիկը կը քաջալերէ լաւ բաներ նախաձեռնելու:

Լա՛ւ կայք մը:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ» մէջ ազգային կամ առևտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային՝ Գաղտնարար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենեակը:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՈՒԿԱՅ

«ՍՈՆԻ» ԵՒ «ԷՐԻՔՍՈՆ» ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴժՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ



«Փի. 800» եւ...

Շուկայական «Էրիքսոն» ընկերութեան համար 2001ը եղաւ ձախողութեան տարի: Ընկերութիւնը իր հզօրութիւնը վերագրելու համար նախաձեռնեց վերադասաւորման ծայրայեղ միջոցառումներու տուն՝ դրկելով հազարաւոր պաշտօնեաներ և վաճառքի հանելով սարքերու արտադրութեան մասշտաբները բաժանմունքներ:

Հոկտեմբեր 2001ին յայտարարուեցաւ, թէ վճարող նախաքայլով մը «Էրիքսոն» ընկերային հեռաձայններ արտադրող աշխարհի երրորդ մեծագոյն ընկերութիւնը, միացած է «Սոնի»ին, որ իլեկտրոնային սարքեր արտադրող աշխարհի մեծագոյն ընկերութիւնն է:

«Սոնի Էրիքսոն Մոնոպոլ» ֆոնիւնիքէյձընգը անունով այս ընկերութիւնը խանդավառութեամբ ողջունուեցաւ մասնագէտներու և բաժնետէրերու կողմէ: Ի վերջոյ, շուկայական և փոփոխական ընկերութիւններուն միացումը գուռ պիտի բանար նորագոյն յաջողութիւններուն, տրուած ըլլալով, որ իւրաքանչիւր ընկերութիւնը իր փորձառութիւնները և նուաճած շուկաները պիտի տրամադրէր նորակազմ այս ընկերութեան:

Սակայն, յաջողութիւններու կարճատեւ «մեղրալուսին» մը ետք, «Սոնի-Էրիքսոն» սկսած է դիմագրաւել որոշ դժուարութիւններ: Այս դժուարութիւնները, ըստ մեկնաբաններու, սկզբունքային են և կը ցուցնեն երկու «հայր» ընկերութիւններու որդեգրած կարգ մը անձիչք քաղաքականութիւնները: Աւելին, մեկնաբաններ կասկածանքով կը մօտենան «Էրիքսոն»ի աշխարհի «թիւ 1» ընկերային ընկերութիւնը դառնալու բռնազօրութիւնը, որուն, տրուած ըլլալով, որ այժմու թիւ մէկը՝ Ֆինլանտական «Նոքիա»ն 10 հազար պաշտօնեայ ունի ուսումնասիրութիւններու բաժանմունքին մէջ միայն, մինչ

«Էրիքսոն»ի պաշտօնէութեան ամբողջ թիւը 4000ը չ'անցնիր: Շուկային վրայ իր հակադիմադրող ընդլայնելու ճիգին մէջ «Սոնի-Էրիքսոն» հրապարակեց լատենտական կարելիութիւններով օժտուած շարք մը ընթացիկ հեռաձայններու տեսակներ, որոնց կարգին՝ «Փի. 800»ը և «Փի. 68 Այ.»ը:

«Փի. 800»ը կ'ընդգրկէ գունաւոր «Փաչ սքրին», լուսանկարչական սարք, լուսանկարներու ալպոմ, լուսանկարները ընդգրկելու կարելիութեամբ օժտուած հեռաձայնի տետրակ, ինչպէս նաև «Ե-նամակ» և «Կարճ պատգամ»ներու (էս. էմ. էս.) առաքման արդիական գրութիւններ:

«Փի. 68 Այ.»ը, որ յաջողութիւն է լայն ժողովրդականութիւն գտած «Փի. 68» ընթացիկ հեռաձայնին, նոյնպէս օժտուած է շարք մը առաւելութիւններով:

Ցաւալիկայ ամիսներուն հրապարակ իջնող «Փի. 200» եւ «Փի. 300» ընթացիկ հեռաձայնները մը պիտի ըլլան, թէ «Սոնի-Էրիքսոն» պիտի կարենա՞յ արդարացը ըրողութիւնը:



... «Փի. 68 Այ.»

նել իր վրայ դրուած յոյսերը, թէ պիտի շարունակէ վերջին ամիսներու իր միջակ արդիւնքները:

Յամենայն դէպս, «Նոքիա», «Մոթորոլա» և նուազ հզօր շարք մը այլ ընկերութիւններու հետ մրցակցութիւնը չ'ափագանց սուր պիտի ըլլայ, յատկապէս՝ նորակազմ ընկերութեան մը համար, որ ոչ միայն երկու մեծ ընկերութիւններու առաւելութիւնները փոխ առած է, այլ նաև որդեգրած կրնայ ըլլալ այդ ընկերութիւններուն թուլութիւններուն ամբողջութիւնը:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՆՈՄԱՏ ԺԻՒՔ ՊՈՔՍ 3» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍԱՐՔԸ



Երբ «Էմ. Փի. 3 Վիլբը»ներ խուճեցին արհեստագիտական սարքերու շուկան, անոնց ստեղծած ազդու կը յաճախ խեղդուեցաւ սպառողին դիմագրաւած կարգ մը անախորժ անակնկալներով. անոնց ծաւալը, ձայնին որակը և վաճառման սակը տեւաբար քննադատութեան թիրախ դարձան:

Սակայն շարք մը «Էմ. Փի. 3 Վիլբը»ներ յաջողեցան իրենց ընդհանուր կարելիութիւններով գրաւել սպառողին ուշադրութիւնը: Ասոնց կարգին կ'արժէ յիշել «Նոմատ ճիւքպոքս 3»ը: 20 կիկապայթ ամբարումի կարելիութեամբ օժտուած այս «ափղահա» կրնայ իր մէջ ամբարել աւելի քան 8 հազար երգ:


Մասնագէտները գրուած իրենց կ'արտայայտուին նաև «Նոմատ ճիւքպոքս»ի ձայնի որակին մասին: Սարքին բարդ (պէթրիմ) մէկ անգամ լեցուելով կրնայ 11 ժամ դիմանալ: Ցաւելեալ որոշ գումարով մը կարելի է նոյնիսկ ունենալ 22 ժամ դիմացող «Նոմատ ճիւքպոքս 3» մը:

Տարօրինակօրէն սարքը օժտուած է նաև «ոմոնթ քոնթրոլ»ով մը, որուն ներկայութիւնը շատերու համար առնուազն... անհմաստ է:

Գերարդիական այս սարքը նաև գերսուղ է, ինչպէս՝ բարձրորակ որեւէ «Էմ. Փի. 3 Վիլբը»: Ան կ'արժէ շուրջ 600 տոյար:

www.hamazkayin.com

«ՊԱԿՁ ՊԱՆԻ» ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԻՆ Կ'ԱՆՑՆԻՆ ՀԱՄԱՑԱՆՑ



«Ուորներ» եղբայրներուն արտադրած շարժուն գծանկարներուն հերոսները, տասնամեակներով պատկերաստուներուն վրայ իրենց փառքը կերտելէ ետք, այժմ իրենց նպատակը դարձուցած են նաև համակարգիչի պատուները նուաճելը: Արդարեւ, Պակզ Պանի, Տաֆի Տաք, Թուրթի, Սիլվեսթըր, Ռոտ Ռանըր և ընկերներ համացանցի www.Looneytunes.com հասցեով կայքին ընդմէջէն կու գան հանրութիւնը նորանոր ձեւերով գուարճացնելու:

Փոքրիկներու և... (խոստովանի՛նք) չափահասներու համար հետաքրքրական այս կայքին «Օլ Նիլ թունգ» բաժինը կը ներկայացնէ շարք մը շարժուն գծանկարներ՝ յատուկ համացանցին համար պատրաստուած: Այստեղ շարժուն գծանկարներուն հետեւող չէզոք հանդիսատես չէ սակայն, այլ կրնայ իր ներդրումը ունենալ ցուցադրութեան մէջ՝ ընտրելով անոր աւարտ կամ մասնակցելով ֆիլմին մէջ ներկայացուած խաղերուն:

Կայքի «Կէյմզ» բաժինը հաւասարապէս, չընտրու համար աւելի, հետաքրքրական է: Այստեղ այցելողները կրնան ընկերակցիլ «Ուորներ» եղբայրներուն ստեղծած հերոսներուն՝ դիմագրաւելով դժուարութիւններ և գտնելով լուծումներ, այս բոլորը՝ շարք մը լաւապէս պատրաստուած և ձեւաւորուած խաղերով:

«Սթարկ Աֆ Տը Մօ» բաժինով կարելի է առանձնաբար ծանօթանալ շարժուն գծանկարներու վերոնշեալ հերոսներուն «Կենսագրական»ին, ինչպէս նաև՝ Հոլիվուտի և ընդհանրապէս աշխարհի մէջ անոնց արձանագրած յաջողութիւններուն:

«Լուցի լուք» բաժինէն կարելի է արձանագրել ձեր նախասիրած հերոսին «սքիմ սէյվըր»ները կամ նկարները:

«Լուցի լայպըրի ֆոր քիտզ» օգտակարն ու հաճելին ի մի բերող բաժին մըն է, ուր փոքրիկները կը կարդան պատմութիւններ, իրենց ներդրումը կ'ունենան պատմութիւններու ընթացքին ճշգրտման մէջ և «Կ'օգնեն» հերոսներուն:

Կայքը հարուստ է նաև շարք մը այլ հետաքրքրական բաժիններով, ինչպէս՝ «Օրիենթալ» և «Փորում»ի բաժինները: «Ուորներ Պատրոլ» Նիլ Միտիա»ի փոխ նախագահ Քեյնի Չիւմիտարայի խօսքերով՝ «Կայքը հաճոյք կը պարգեւէ տարիներէ ի վեր «թիւնգ»ի համակիրներուն և այս հերոսներուն թերեւ առաջին անգամ ըլլալով հանդիպող նորագոյն սերունդին, և այդ՝ համացանցի միջոցով:

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



Վարդգէս փնտռեցի «Ետիու»ին, ապա՝ «Կուկլը»ին և «Էքսայթ»ին մէջ: Ի վերջոյ գայն գտայ... լուսադարանին մէջ:



Ասիկա նորագոյն վերարկուն է... 20 առ հարիր բուրդ, 80 առ հարիր թուագրային:

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան

ՔՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

«Եղբայրս 12 տարեկան է, իսկ ես՝ 10 տարեկան: Ան անդադար ինձի գեշ խօսքեր կ'ըստ եւ կը ցաւցնէ: Ի՞նչ լուր»:

«Քոյրս միշտ զիս կը նեղացնէ: Ի՞նչ ընել, որ այս վիճակը փոխուի»:
Այս սովորական զանգատները մենք յաճախ կը լսենք քոյրերու եւ եղբայրներու միջեւ...

ԱՄԵՆ ՄԵԿԸ ՈՒՆԻ ԻՐ ՏԵՂԸ

Դուք բոլորդ կ'ապրիք նոյն տան մէջ, սակայն դուք զիրար չէք ընտրած, ո՛չ ալ ընտրած էք ընտանիքին մէջ ձեր կարգը: Մեծ, միջակ, պզտիկ՝ ամէն մէկը տեղը ճշդուած է: Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը հասնողուած է, որ միւսին տեղը աւելի լաւ է: Ահա թէ ի՞նչպէս յաճախ կը սկսին վիճաբանութիւնները:

ԼԱՒ ԿՈՂՄԵՐԸ

Քրոջ եւ եղբոր միջեւ վիճաբանութիւնները բոլորովին աւելորդ չեն: Անոնք կարելիութիւնը կու տան արտայայտուելու եւ ըսելու սրտիդ մէջ ինչն էր: Իրարմէ կը նեղուինք, իրարու կը բարկանանք, բայց յետոյ իրարու հետ կը հաշտուինք:

Ասիկա նախընտրելի է, քան անկիւն մը մտնել եւ ցաւցնելու մասին մտածել: Սակայն պէտք չէ մոռնալ նաեւ լաւ վարկեանները: Օրինակի համար, երբ մեծ եղբայրը կը պաշտպանէ պզտիկ եղբայրը զբօսանքին, երբ սենեակները իսկական խաղաղարարու կը վերածուին...

ԱՄԵՆԵՆ ՊՁՏԻԿԸ ՔԵՁ ԿԸ ՆԵՂԱՅՆԵ՞

Վերջապէս ձերբազատեցար մեծ եղբորմէդ, որ կ'ուզէր միշտ վրադ իշխել: Ահա կու գայ պզտիկ եղբայրդ, որ կ'ուզէ քեզի պէս ընել կամ միշտ ոտքերուդ տակն է: Մի՛ փորձեր բռնութեամբ լուծում մը գտնել. այս միջոցը բանի չի ծառայեր: Փորձէ աւելի սրամիտ մօտեցում մը. օրինակի համար, «հետդ կը



խաղամ, երբ դասերս վերջացնեմ», կամ՝ «քեզի փոխ կու տամ իմ կէյմ Պոյս, բայց, հաճիս, կ'երթա՞ս ուրիշ տեղ խաղալու»:

ՓՈՒՆԱԴԱՐՉ ԅԱՐԳԱՆՔ

Եթէ մեծ եղբայրդ կը սիրէ քեզի զարնել կամ հայհոյել, առանց վարանելու դժգոհութիւնդ արտայայտէ եւ անոր ըսէ: «Ես այլեւս զգուեցայ, զգուեցայ՝ կը բաւէ»: Անոր յիշեցուր նաեւ, որ ո՛չ միայն չափահասի մը կողմէ կիրարկուած բռնութիւնը արդար չէ, այլ նաեւ՝ փոքրի մը կողմէ կիրարկուած բռնութիւնը:

Ի՞ՆՉՊԵՍ ՓՈՒՆԵԼ ՎԻՃԱԿԸ

Շատ մի՛ մտահոգուիր, եթէ դուք յաճախ իրարու հետ կը վիճաբանիք: Եղբոր կամ քրոջ հակադրուիլը միջոց մըն է նաեւ ընտանիքէն դուրս ուրիշ անձերու հետ ապրիլ սորվելու:

ՀԱՐՑԱՐԱՆ



- 3) Ո՞ր երկրէն եկած է թանկօ պարը:
- 4) Ազթեքները ինչէ՞ կը վախճային:
 - Գազաններէն:
 - Արեւուն վերջնակա-նապէս կորսուելէն:
 - Անձրեւէն:
- 5) Ի՞նչ լեզու կը խօսի Քափ Վէրի մէջ:
 - Փորթուգալերէն:
 - Սպաներէն:
 - Արաբերէն:

- 1) Ո՞ր երկրէն եկած է Ֆլամենկոն:
 - Սպանիայէն:
 - Փորթուգալէն:
 - Մեքսիքայէն:

- 2) Ի՞նչ գոյն ունին Նիւ Եորքի թաքսիները:
 - Սէ:
 - Դեղին:
 - Կարմիր:

- 6) Ո՞րն է Մատակասքարի մայրաքաղաքը:
- 7) Ո՞րն է աշխարհի ամէնէն փոքր պետութիւնը:

- 8) Լոյսի տարի մը կը համապատասխանէ:
 - 9,461 քմ.ի:
 - 9,461 միլիոն քմ.ի:
 - 9,461 միլիարդ քմ.ի:

- 9) Ըստ աւանդութեան, ո՞ր քաղաքին մէջ

- ծնած է ճէզ երաժշտութիւնը:
- 10) Կարգ մը թութակներ քանի՞ բառ կրնան սորվիլ:
 - 100:
 - 500:
 - 1000:



- 11) Ասիոյ հարաւարեւելքը գտնուող ո՞ր երկիրը փորթուգալական գաղութ մըն էր մինչեւ 1975:

- 12) Փիղ մը կրնայ կշռել մինչեւ:
 - 500 քիլո:
 - 1 թոն:
 - 6 թոն:

(Պատասխաններ էջ՝ 8)

ԳԻՏԷԻՐ, ԹԷ... ԳԻՏԷԻՐ, ԹԷ...

Ո՞Վ ԅԱՅՏՆԱԲԵՐԱԾ Է ԱՄԵՐԻԿԱՆ

Քոյրմպո՞ս: Ո՛չ: Վախքինկնե՞րը: Ո՛չ: Ամերիկան իսկական յայտնաբերողները հոն հասած են մօտաւորապէս քառասուն կամ յիսուն հազար տարի առաջ՝ գալով Ասիայէն եւ անցնելով Պէրէնէի նեղուցէն: Հաւանաբար այդ շրջանին նեղուցը սառած կամ չորացած էր (ծովուն մակարդակը ներկայ մակարդակէն հաւանաբար 100 մետր աւելի ցած էր): Անոնք եղած են Ամերիկայի առաջին բնակիչները:


ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԻՆ ՔԱՐԸ

ժայռերուն ներքին շողարձակումներուն ուսումնասիրութիւններուն շնորհիւ երկրաբանները կը ցած են մէջտեղ բերել միջոց մը՝ ճշգրտօրէն հաշուելու ժայռերուն տարիքը: Ըստ այս ուսումնասիրութիւններուն, մեզի ծանօթ ամէնէն հին քարը 4,030 միլիոն տարեկան է:


ՉՄԱՍՈՒՄԸ ՄԱՐՄԻՆԵՐ...

... Գոյութիւն չունին միայն Եգիպտոսի մէջ: Բազմաթիւ ցեղեր գտնուած են իրենց մեռելներուն մարմինները: Օրինակի համար, մորթերու եւ ուրիշ կերպասներու մէջ փաթեթուած գմուտած մարմիններ գտնուած են Միացեալ Նահանգներու մէջ: Գիտէի՞ր, թէ Բ. Ա. 4431 թուականէն գմուտած մարմին մը գտնուած է չինական Քրորէնա քաղաքին մէջ: Մարմինը փաթեթուած էր բուրգի եւ կաշիէ երիզներով: Ան շատ լաւ վիճակի մէջ պահուած էր՝ շնորհիւ անապատային չոր կլիմային:


Ժ Ա Մ Ա Ն Ց




1 - 21 կետերը իրարու միացուր՝ գտնելու համար պահուած պատկերը:




Ո՞ր տուփիկին վրայ Կարիմէն եւ Վաչէն իրարու պիտի հանդիպին, երբ գիտենք, որ Կարիմէն Վաչէն երկու անգամ աւելի արագ կը քալէ:



Ո՞ր կտորը կը համապատասխանէ ծառին ծակին:



Իւրաքանչիւր պզտիկ կրնա՞ս վերադարձնել անոր պատկանող հագուստները:



Կրնա՞ս գծել պատկերին ձախ կողմի բաժինը:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism

Varna

Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides, Visa & taxes not included

4 days 3 days 185\$
Local trip to Cyprus & Crete 380\$

01.900598. 901598 - 03.258336. 256254
www.orientplus.com

ՀԱՄԲԻԿ ԱՍՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ

HAMPIG SASSOUNIAN

CSP - L.A.C. B - 5 - 131 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

«Ա.Զ.Գ.Ա.Կ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«Ա.Զ.Գ.Ա.Կ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Yerevan

Armenian products
Gifts For Any Occasion

Address : Bourj Hamoud, Municipalite Street, Facing Center Arine, # 63 Street Fax: 01/254747 Tci.: 01/254747 - 03/348105, E-mail: tammy@lynx.net.lb

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԷՋԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- 1) Սպանիայէն (Անտալուս). 2) Դեղին. 3) Արժան-թիցէն. 4) Արեւուն վերջնականապէս կորսուելէն. 5) Փորթուգալերէն. 6) Անթանապոլիս. 7) Վատիկան. 8) 9,461 միլիարտ բմ. 9) Նի Օրլիզի մէջ. 10) 1000 բառ. 11) Արեւելեան թիմորը. 12) 6 թոն:

www.lemagan.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէլլուրի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Սուրիական թղթակի', 'Իրանական տիւար', etc.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Անգլիական մէկ ոսկի', 'Իրանական մէկ ոսկի', etc.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը', 'Քանադական տոլար', etc.

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում', 'Ա. կարգի 4 4 1/8', etc.

ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5212

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

10x10 grid for the crossword puzzle.

ՇՈՐՀՈՒՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՅ

- 1. Գիտակից, տրամաբանող - Արդուրենէն: 2. Խաղ - Օրինակելի: 3. Սպանացի գեղանկարիչ - Կատոլագի գազան: 4. Բանդագուշող, խնայող: 5. Արդի - Համար: 6. Վայելչութիւն - Արանի օտար անուն: 7. Շանի - Ամօթ, խայտառակութիւն: 8. Սպասուհի - Խօսք: 9. Ճիւղարկ - Սուրիական լրատու գործակալութիւն: 10. Ածականակերտ մասնիկ - Իշխանաւոր:

ԹԻՒ 5211

ԽԱՉԲԱՌԻ

ԼՈՒԹՈՒՄԸ

10x10 grid for the second crossword puzzle.

«ԱՁԴԱԿ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅԱՆՔ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻ 12

Ո՞ր ժապաւենը տիրացաւ 2002ի լաւագոյն օտար ժապաւենի «Օսթար»ին: (2 հիշ)

ԱճՈՒՆ :

Մականուն :

Հասցէ :

Հեռ. :

Ծանօթ.- Պատասխանները կտրօնները «Ազդակ»ի խմբագրութեան փոխանցել մրցանքի բոլոր հարցումներուն ներկայացումէն ետք:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ Գեորգ Պոստոյեանի (մահացած Մոնրէալ) մահուան առիթով, Պոստոյեան ընտանիքը ցաւակցութիւններ արտայայտելով Կիրակի, 4 Օգոստոսին Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան արարողութեան տեղ, ինչպէս նաեւ՝ Երկուշաբթի 5 եւ Երեքշաբթի 6 Օգոստոսին, հանգուցեալին բնակարանը, Էշրեֆի: Հեռ. 01 - 336699:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԹԵՃԻՐԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳԵՈՐԳ ՊՈՍՏՈՅԵԱՆԻ (մահացած Մոնրէալ) մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՆԱՀԻՏ ԾԸՐԾԸՐԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՐԻ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Ռըմէյի Ս. Յարութեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԷԼՄԱՍ ՊԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԷԼՄԱՍ ՊԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 4 Օգոստոս 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ) Փոքր ճամբորդութիւն մը կամ տեղափոխութիւն մը ձախողութեան պիտի մատնուի: Այսուհանդերձ, ատիկա պիտի չազդէ օրուան ձեռք բնականոն կեանքին: Թեթեւի առէք պատահարը:

☆ ՑՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Շատ ուշադիր պետք է ըլլաք այսօր, եթէ գնում մը պիտի կատարէք, մանաւանդ՝ եթէ վարկով պիտի կատարէք գնումը: Ուրեմն, հարկ եղած երաշխիքը պատրաստեցէք:

☆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Օրը փայլուն կամ յաջող չէ, բայց դուք պիտի կարենաք ձեռք բերել կարգադրել եւ ձեռք բաժինը ապահովել լաւ ձեւով:

☆ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Այսօր ուշադիր եղէք ձեր կերած - խմածին: Կարելի է սննդաղտութիւններ եւ միւս կողմէ՝ բուռներ: Բնագէթ բնականոն ժամերուն, ինչ որ չէք ընել, առե՛նք մը ի վեր:

☆ ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Մրագիր մը չուրք պիտի իյնայ, բայց մի՛ յուսահատիք, վերանայեցէք, որովհետեւ բանի մը օր ետք կարելիութիւնը պիտի ունենաք իրագործելու զայն:

☆ ԿՈՑ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Այցելութիւն մը պիտի տաք բանգարան մը կամ պատմական այլ կարգի վայր մը, որ ձեր մէջ պիտի արթնցնէ փափաքը՝ փոխելու ձեր ասպարէզը: Ինչու ոչ...

☆ ԿԵՆԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Հեռուոր երկիր մը ճամբորդելու հարցը արդէն ձեռնարկուած է նպաստաւոր կերպով: Շատ գոհ պիտի մնաք ձեր այս նախաձեռնութեան:

☆ ԿՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Այսօր կարելիութիւնը պիտի ունենաք իրագործելու յաջող աշխատանք մը: Ուրեմն դուք ձեզի ընծայեցէք այս աղուոր հանդէպը: Օրը բախտաբեր է:

☆ ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Այս ցոր ամսուան ընթացքին պիտի յաղթահարէք կարգ մը դժուարութիւններ: Ամուսնական կամ ընտանեկան ձեռք կտրուած սովորական բնոյթ ունի, ու ասիկա ձեր կողմէն ձեզի: Այս մասին լաւ մտածեցէք, գտէք պատճառը՝ նախքան խնդրաշարժելու ըլլալը:


☆ ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Խանգարումներ տեղի պիտի ունենան եւ ձեր շուրջ պիտի տեղի ձեռք կտրուի «հով» մը այս ամսուան ընթացքին: Եթէ դարմանումի մը պիտի ենթարկուիք, մի՛ ձուլանաք: Եթէ ուշանաք, ետքը պիտի գոչաք:

☆ ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) Օգոստոս ամսուան ընթացքին պիտի բարելաւուի ձեր աշխատանքները եւ առօրեան: Այսօր սիրելի հանելիկ հանգիպում մը ձեզ կը սպասէ, բայց ջանեցէք այս աղուոր կապը պահպանել երկար առե՛նք համար:

☆ ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ձեր նախաձեռնութիւնները խանգարող դեպք կամ հարց պիտի չմնայ: Ընտանեկան կարգ մը քարացած կեցուածքներ այսօր պիտի ունենան իրենց փոփոխութիւնը: Ասիկա յաջողութիւն մը նկատուցէք այսօր:

ՕՐԱՏԵՏՐ ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ ԱՐՁԱԿՈՒՐԳ՝ ՍԱԿԱՅՆ ԿԵՆՍՈԼՈՐՏԻՆ ԲԱՐԵԿԱՄ ՄՆԱԼՈՎ

Այլ երկիրներու հետ բաղդատած, Լիբանանի մէջ վերջերս միայն համատարած երեւոյթի վերածուցում կենսոլորտի հոգատարութիւնը: Այնպէս որ, ներկայիս լիբանանեան այս կամ այն շրջաններուն մէջ արդէն հաստատուած են կենսոլորտի պահպանման գրասենեակներ, կազմակերպութիւններ եւ մանաւանդ՝ կենսոլորտի պրօսպեկտներ, թեան նորութիւնները ներկայացնող հաստատութիւններ, որոնք կը վայելեն կենսոլորտի նախարարութեան եւ միջպագային կազմակերպութիւններու հովանաւորութիւնը:



Վերջերս Լիբանանի մէջ վերջերս միայն համատարած երեւոյթի վերածուցում կենսոլորտի հոգատարութիւնը: Այնպէս որ, ներկայիս լիբանանեան այս կամ այն շրջաններուն մէջ արդէն հաստատուած են կենսոլորտի պահպանման գրասենեակներ, կազմակերպութիւններ եւ մանաւանդ՝ կենսոլորտի պրօսպեկտներ, թեան նորութիւնները ներկայացնող հաստատութիւններ, որոնք կը վայելեն կենսոլորտի նախարարութեան եւ միջպագային կազմակերպութիւններու հովանաւորութիւնը:

Հետաքրքրական է այս մարզին մէջ երիտասարդներու ներկայութիւնը: Անցնող տարիներուն լիբանանցի երիտասարդը աւելի աշխուժացած է, անոր մտայնութիւնը անոր կարիքները հոգալով եւ անոր սպասուածքը վտանգներուն տարրորդութիւնը: Մանաւանդ արեւմտեան երկիրներու մէջ նորաձեւութեան վերածուած ամբողջական մտայնութիւնը:

Սյուրիոյն աղէցնութեամբ է, որ Լիբանանի լեռներու լանջերուն այսօր գոյուրի ունին կենսոլորտի հանգստեան տուններ եւ պանդոկներ, որ այցելուները առիթ կ'ունենան իրենց արձակուրդը նորիւրի բնութեան, պայտաւի լաւ ճանչնալով, անոր կարիքները հոգալով եւ անոր սպասուածքը վտանգներուն տարրորդութիւնը: Մանաւանդ արեւմտեան երկիրներու մէջ նորաձեւութեան վերածուած ամբողջական մտայնութիւնը:


ՀՆՈՒՍԵՍԻԼ

Table of TV and radio programs with columns for channel, time, and program name. Includes programs like 'Սապահօ', 'Շիֆրէ Լեթր', 'Երգերու յայտագիր', etc.

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԹԵՆԻՍ. ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԴՈՒՐՄ ԶԳԵՅ ՀԵՆՄԱՆԸ ԵՒ ՀԱՍԱԻ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Ուիմպլերի մրցաշարի աւարտականին հասած արժանիքն ապահովեց Գալի Նալպանտեան, Թորոնթոյի մէջ տեղի ունեցող Մասթրըպ մրցաշարին յաջողեցաւ այլ իրագործում մը կատարել, երբ Գ. հանգրուանին իր կատարած մրցումին պարտութեան մատնեց բրիտանացի Թիմ Հենմանը՝ 4 - 6, 7 - 6 եւ 7 - 5 արդիւնքով:

Հակառակ կիպիլ արեւին, ուր ջերմաստիճանը կը հասնէր 42ի, Նալպանտեան առաջին սէթը պարտուելով հանդերձ՝ տարաւ վերջնական յաղթանակը, շուրջ երեք ժամ տեւած այս մրցումին եւ ապահովեց քառորդ աւարտական հանգրուանին իր տունը:

Գ. հանգրուանի այլ մրցումի մը ընթացքին, Երիկ Նովակը (Չեխիա) յաղթանակ մը արձանագրեց, երբ 7 - 5 եւ 6 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց Թեյլըր Տէնթըր (Մ. Ն.):

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽԱՂԵՐ

ԹՈՐՓ ՇԱՐՇԵՑԱԻ ԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԵՏԱԼԸ

Մանչեսթըրի մէջ (Անգլիա) տեղի ունեցող Բրիտանական Հասարակապետութեան 9րդ օրուան խաղերուն, աւստրալիացի Իան Թորփ շահեցաւ իր հինգերորդ ոսկի մետալը, երբ 100 մէթր ազատ լողի մրցումներուն արձանագրեց 48" 73 արդիւնք մը:

19 տարեկան Թորփ, որ այսպիսով ընդհանուրը շահած եղաւ ինը ոսկի մետալներ (ան չորս ոսկի շահած էր 1998ի խաղերուն, Քուալա Լամփուրի մէջ), պէտք ունի յաւելեալ երկու ոսկի մետալներու, որպէսզի այս խաղերուն 72 տարուան պատմութեան մէջ նոր մրցանիշ մը հաստատէ: Այժմ մրցանիշը կը պատկանի աւստրալիացի լողորդ Սիւլի Օնիլի, որ 1990էն 1998 շահած է տասը ոսկի մետալ:

Աղջկանց 100 մէթր թիթեռնիկի լողի մրցումներուն ոսկի մետալին տիրացած 26 տարեկան աւստրալիացի Փեթրիա Թոմաս, յաջողեցաւ այս խաղերուն պատմական իրագործում մը կատարել, երբ յաջորդաբար երրորդ Բրիտանական Հասարակապետու-



Իան Թորփ իր շահած Գործող ոսկի մետալով

թեան խաղերուն, նոյն ծիրէն ներս ոսկի մետալի մը տիրանալ, արձանագրելով՝ 58" 57 արդիւնք մը: Տղոց 400 մէթր ազատ

լողի մրցումներուն ոսկի մետալին տիրացաւ այլ աւստրալիացի մը՝ Ճասնա Գրեյնը, որ արձանագրեց 4 վայրկեան 16" 95 արդիւնք մը:

ԼՈՂԱՐՇԱՒ

ԷՏ ՄՈՋՐԱԻ ՄՐՑԱՆԻՇԸ ԿՈՏՐՈՒԵՑԱԻ

Պերլինի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող

Եւրոպայի լողարշաւի ախոյեանութեան մրցումներուն, երկն ութրանացի Օլեկ Լիսոկո, որ իր երկրորդ ոսկի մետալին տիրացաւ, յաջողեցաւ աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել, երբ տղոց 50 մէթր կտրծի լողի մրցումներուն արձանագրեց 27" 18 արդիւնք մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր ամերիկացի Էտ Մոյլըսի, որ հաստատուած էր Մարտ 2001ին (27" 39)՝ Օսթինի մէջ (Թեքսաս):

23 տարեկան ութրանացին, իր առաջին ոսկի մետալին տիրացած էր շաքարապիպքին, երբ շահած էր 100 մէթր կտրծի լողի ոսկի մետալը: Արծաթ մետալին տիրացաւ Միհայի Տիւսարայ (Հունգարիա), որ արձանագրեց 27" 51 արդիւնք մը, իսկ պրոնզ մետալին աւոր ազգակից՝ Քարոլի Կուլթըրը (27" 85):

Տղոց 200 մէթր ազատ լողի մրցումներուն, հոլանտացի Փիթըր վան Տէն Հուկընպէտ բարելաւեց իր իսկ կողմէ հաստատուած եւրոպական մրցանիշը, արձանագրելով՝ 1' 45" 35 արդիւնք: Ան երկու տարի առաջ Սիտնիի Ողիմպիականին տիրացած էր ոսկի մետալին, հաստատելէ ետք եւրոպական մրցանիշ մը (1' 45" 35):

Նշենք, թէ 24 տարեկան հոլանտացին քանի մը օր առաջ շահած էր իր առաջին ոսկի մետալը, 100 մէթր ազատ լողի մրցումներուն:

200 մէթր ազատ լողի արծաթ մետալին տիրացաւ իտալացի Էմիլիանո Պրեմպիլա (1' 46" 94), իսկ պրոնզ մետալին աւոր ազգակից՝ Մաիմիլիանո Ռոսոլիանո (1' 47" 98):

ԻՏԱԼԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՖԻՈՐԵՆԹԻՆԱ ՈՉ ԵՒՍ Է

Իտալիոյ ֆուտպոլի պատմութեան մէջ 76 տարուան կեանք ունեցող եւ երկու անգամ ախոյեան հանդիսացած Ֆիորենթինայի անունը երէկ ջնջուեցաւ իտալական ֆուտպոլէն, սնանկացած հռչակուելէ ետք:

Դեռ երեք եղանակ առաջ, «Չէմփիընզ Լիկ»-ի իր մասնակցութիւնը բերած Ֆիորենթինա, որ 2001-2002 եղանակին աւարտին փոխադրուած էր Բ. դասակարգ, այդ դասակարգի ախոյեանութեան մէջ ալ չընդունուեցաւ, որովհետեւ գրեթէ կը գտնուէր սնանկացումի սեմին:

Իտալիոյ ախոյեանութեան ոչ մէկ դասակարգին մէջ տեղ մը ունեցող Ֆիորենթինայի բոլոր մարզիկներն ալ այժմ «ծախու» են եւ ակումբին վարչութիւնը կը փորձէ համաձայնութեան գալով բոլորին հետ ջնջել պայմանագրութիւնները:

Ֆիորենթինայի քաղաքապետական խորհուրդը կը յայտնէ, թէ հիմնած է նոր ակումբ մը, որ կը կոչուի «Ֆիորենթինա 1926 Ֆիորենթինա», ակումբին նախագահ նշանակելով Ֆիորենթինայի քաղաքապետը՝ Լէոնարտո Տոմենիքիսի:

Սակայն հակառակ այդ մէկին, իտալական ֆուտպոլի պատասխանատուներ պէտք է անոր տան նոր արտօնագիր մը, որպէսզի անիկա մաս կազմէ Գ. դասակարգին (Սի. 1) եւ կամ Դ. դասակարգին (Սի. 2):

Իտալական մամուլին համաձայն, 2001-2002 եղանակին աւարտին Ա. դասակարգ բարձրացած Քոնո ակումբին այժմու նախագահը՝ Էնրիք Փրեպիտի շատ հաւանաբար ըլլայ Ֆիորենթինայի ակումբին պորալիզ կանգնող գլխաւոր անձը:

Ֆիորենթինայի քաղաքապետին գլխաւոր պատասխանատուներէն՝ Էտենիօ Ճիանի կը յայտնէ, թէ վերստին խումբին անցեալի փառքի օրերը ունենալու համար, նոր Ֆիորենթինայ պէտք ունի անբողջ քաղաքին համակիրներուն պորակցութեան, որովհետեւ խումբը կը պատկանի անոնց եւ պէտք է որ անոնք գործակցին իրենց հետ:

Իտալիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, Ֆիորենթինայի պարտը հասած էր 22 միլիոն եւրոյի: Վստահաբար, որ այդքան պարտերու տակ եղող խումբ մը չէր կրնար մաս կազմել նոյնիսկ Բ. դասակարգին, հետեւաբար անիկա հռչակուեցաւ սնանկացած:

Ըստ Իտալիոյ լիկայի ֆետերասիոնին նախագահ Ատրիանօ Կալիանիի՝ Բ. դասակարգին մէջ Ֆիորենթինայի փոխադրուող խումբը կ'ըլլայ Թենանա, հակառակ անոր որ անիկա անցեալ եղանակին 17րդ դիրքը գրաւելով փոխադրուած էր Գ. դասակարգ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ 2002-2003 ԵՂԱՆԱԿԸ՝ ՍԿՍԱԻ ԿԷՆԿԱՆ - ԼԻՈՆ (3-3) ՄՐՑՈՒՄՈՎ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 2002-2003 եղանակի բացման մրցումին, որ տեղի ունեցաւ երէկ, Կենկան իր դաշտին վրայ պարտութեան մը փրկուեցաւ, երբ մրցումին վերջին երեք վայրկեաններուն երկու կողմ նշանակելով 3-3 արդիւնքով հաւասարութիւն մը խլեց իր հիւրին՝ ախոյեան Լիոնէն, որ 1981էն ի վեր չէ կրցած յաղթանակ արձանագրել եղանակի բացման մրցումին: Լիոնի կողմը նշանակեցին՝ Ժունիսիօ (3րդ), Ժան-Մարի Շանլիէ (38րդ) եւ Սոնի Անտերսոն (51րդ), իսկ Կենկանի կողմը՝ Սթեֆան Քառնօ (24րդ), Սետրիք Պարտոն (88րդ) եւ Տիւրի Տրոկայ (90րդ):

Այսօր տեղի կ'ունենան մնացեալ ինը մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

Մարսէյ - Նանթ	(ժամը 18:15ին)
Փարիզ Մ. ժ. - Օքսէն	(ժամը 21:00ին)
Պասթիա - Լանս	(ժամը 21:00ին)
Լիլ - Պորտո	(ժամը 21:00ին)
Նիս - Լը Հաւրը	(ժամը 21:00ին)
Մոնփելիէ - Ռէնն	(ժամը 21:00ին)
Սրտան - Սոչո	(ժամը 21:00ին)
Մթրապուրիկ - Ամաքսիօ	(ժամը 21:00ին)
Թրուա - Մոնպօ	(ժամը 21:00ին)

ՇՐՋԱՊՏՈՅ ՂԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱՏԱԿԱՅԻ

- Օգոստոս 9-16 Հայաստան լճան պտոյտներով՝ 650 \$
- Օգոստոս 9-23 Հայաստան լճան պտոյտներով՝ 825 \$
- Օգոստոս 23 - Սեպտեմբեր 6 Հայաստան, Ա. կարգի հիւրանոց եւ բացառիկ յայտագիր, Ջերմուկ, Սեւան, Ծաղկաձոր, Դիլիջան, պարահանդես. զին՝ 850 \$, իսկ թռիչքները Հալեպէն, բոլոր զիններու վրայ 75 \$ նուազ + օդակայանի տուրքը ձրի:
- Սեպտեմբեր 6-10 ԿԻՊՐՈՍ զինի փառատօնին առիթով. լճան պտոյտներով Լիմասոլ, Այաճափա, Եփրոսիա, Լառնա. զին՝ միայն 270 \$ եւ հինգ աստղանի շքեղ պանդոկ 385 \$
- Սեկ շաքաթ Վառնա 285 \$, մեկ շաքաթ Եայթա 540 \$, մեկ շաքաթ յունական կղզիներ Կալքոս նաւով ամէն զինը խրախմբը լճան ճաշերով, զին՝ 450 \$
- Ամէն Ուրբաթ 3 օր Լաքաթիա, հինգ աստղանի պանդոկ 85 \$
- Ամէն Կիրակի Դաճակոս - Ստոնյա 13 \$
- Կիրակոս Երթուղարձ արագ նաւով 65 \$
- Ա. Աստուածածնայ տօնին առիթով եօթեայ շրջապտոյտ - ուխտագնացութիւն դէպի Պանիա, Լաքաթիա, Ջեսապ, պտոյտներ 69 \$, մեկնում 16 Օգոստոս:

ԱճճՆԱԹՈՐԳՆԵՐ 01-261177, 01-240654 եւ 03-233978:

VIVACITÉ Center

ՄԱՐԶՈՒՄԻ ԵՒ ՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ԼԱԲԱԳՈՅՆ ԿԵԴՐՈՆԸ

ԵՍԹԵՏԻԿ - CELLULITE

Jdeideh Highway - Facing Mc Donalds - Center - 01-261177 - 01-240654 - 03-233978

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԿԱՍ ԿՐՍԵՆ ՓՈԼԻԿԼՕԹ ՔՈՒԼԵԻ ԵՐՋԱՆԱԿԱՐՏԵՐԸ

«... Փօլիկլօթ Քոլէճէն մասնակցեցաւ BT3 քննութեան, Լիբանանի մէջ բարձրագոյն նիշը ապահովող առաջին հինգին մէջ էի: Այս յաջողեցաւ նաեւ TS վկայականի քննութեան: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ոսկերչական մեծ ընկերութեան մը մէջ, Գործ Համու...»:

ԹԱԼԻՆ ՃԱՐԻՔԵԱՆ

Կրթութեան նախարար ԱՊՏԷԼ ՌԱՀԻՄ ՄԸՐԱՏԻ Վկայութիւնը՝ ՓՈԼԻԿԼՕԹ ՔՈՒԼԵԻ 30ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

«... Ինքզինքս մեծապէս երջանիկ կը զգամ Լիբանանի մէջ արհեստից եւ արուեստից ուսման արձանագրած նուաճումին համար: Այս կայրուածին մէջ եւ քաջածանօթ եմ Փօլիկլօթ Թեքնիքըլ Քոլէճի արձանագրած ներդրումին, նուաճումին եւ յաջողութեան: 30ամեակին առիթով կը շնորհաւորեմ քոլէճին հիմնադիր տնօրէն եւ իմ տարիներու բարեկամ արն. Պետրոս Շէմմեւեանը»:

Խօսած վկայականաց բաշխման հանդէսին, Ուրբաթ, 12 Յուլիս 2002

CYCLOSPORT

since 1932

- 1 - THE BICYCLE SHOP
- 2 - RENT A BIKE
- 3 - CREDIT FACILITIES
- 4 - SERVICES
- 5 - RENT ROLLERS

FAST DELIVERY TO ANY DESTINATION

Sourien Korpilari & Sons Est. - GEMAYZEN, main road, facing Pigeon, Tel. 01-446790, Nahr Beirut 01-581791 - Jdeid Dib Highway, 04713344 - E-mail: CYCLOSPORT@CYBERNET.LB

ՃԱՏՐԱԿ

1. ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ԱՆՌՈՆԻԵՍԵԻ Ռ. - ԶՈՒԶՈՒՏԻՔԻՍ Կ. (2002)

2. ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ԿՈՍԵՉ Ժ. - ՖԱՎՐՈ Մ. (2002)

3. ՍԵՒԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ՄԻԼՔՕ Կ. - ՉԱՄՐԵՆԸՕ Տ. (2002)

4. ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

ԵՒՐԸ ՍԵՆՔԸՐԴԵՐԻ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սինակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

355 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԻՏՏՃԷՆ ՎԱԵՐԱՅՈՅՏԻՆ ԿՈՂՄԷ

Մ. Նահանգներու Ծերակոյտը Հինգշաբթի օր դիրքաւ վաւերացուցած է պաշտպանութեան մարզին յառաջիկայ տարուան 355,4 միլիարտ տոլարի հասնող պիտոստի բանաձեւը:

Դեմոկրատներով գլխաւորուող Ծերակոյտը 3ի դէմ 95 բուէներով եւ գրեթէ առանց բանավէճի վաւերացուցած է հսկայ այդ գումարին վերաբերեալ բանաձեւը: Անիկա ներկայ պիտոստէն 35 միլիարտ տոլար աւելի է:

Հանրապետականներով գլխաւորուող Ներկայացուցիչներու Տունը Յունիսի բանաձեւին իր տարբերակը վաւերացուցած էր:

Ներկայացուցիչներու Տունը եւ Ծերակոյտը տակաւին պէտք է լուծեն իրենց երկու տարբերակներուն միջեւ տարբերութիւններու հարցը:

Նախագահ ձորձ Պուշ կոչ ուղղուած է Քոնկրէսին, որ արագօրէն վաւերացնէ, յայտնելով, որ անիկա անհրաժեշտ է Աֆղանիստանի մէջ գործողութիւններուն եւ ահաբեկչութեան դէմ պատերազմի այլ երեսներուն համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ, ԹԵ ԿՐՆԱՅ ԱՐՏՕՆԵԼ ԶԵՆՔԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Մինչ Ուաշինկթըն կը վերահաստատէր նախագահ Սատտամ Հիւսէյնը տապալելու իր ծրագիրը, Իրաք կ'ըսէր, թէ կրնայ արտօնել ՄԱԿի քննիչներուն, որ վերադառնան՝ 1998էն ի վեր առաջին անգամ ըլլալով արտօնելով, որ քննիչին բացուի զէնքերու անոր ենթադրեալ ծրագիրին շուրջ:

Իրաքի այդ քայլը կրնայ յետաձգել ամերիկեան յարձակումի մը ծրագիրները կամ գէթ բարդացնել՝ միջազգային զօրակցութիւն սպառնալով Ուաշինկթընի ճիգերը:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի Հինգշաբթի օր յղուած նամակով մը, Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի ուզած է թեքնիք բնոյթով կանխահաս բանակցութիւններ ունենայ ՄԱԿի գլխաւոր քննիչ Հանս Պլիքսի հետ՝ «հսկողութեան եւ ստուգումի գործունէութեանց յառաջիկայ հանգրուանին համար ուժեղ հիմ մը հաստատելու եւ դէպի այդ հանգրուանը ուղղուելու

համար»:

ՄԱԿ եւ եւրոպացի քանի մը դիւանագէտներ երէկ ողջունած են Իրաքի այն ակնարկութիւնը, թէ կրնայ ՄԱԿի խմբակներ վերընդունիլ:

Ռուսիա նոյնպէս ողջունած է զայն, յայտնելով, որ անիկա կարելի էր քայլ մըն է Իրաքի հարցը խաղաղօրէն լուծելու իմաստով:

Սակայն Բրիտանիա, որ Ուաշինկթընի պինտորակայն ամենէն սերտ դաշնակիցն է, դիտել տուած է, որ Իրաք նպատակ չունի քննիչներուն ազատ մուտքը արտօնել զէնքի կեդրոններուն:

Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշ Հինգշաբթի օր վերահաստատած է իր վարչակարգին յանձնառութիւնը՝ Պաշտպանութեան «վարչակարգի փոփոխութեան» գաղափարին հանդէպ:

Իրաք կ'ըսէ, թէ զէնքի արգիլելու իր բոլոր ծրագիրները ջնջած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՑ

ՏԵՆՔԹԱՇ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ՈՐ ՔԼԵՐԻՏԵՍԻ ՅԵՏ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ ԵՆ

ՆԻԿՈՒՄ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռուֆ Տենքթաշ Ուրբաթ օր խոստովանած է, որ կղզիին ապագային գծով լոյն կիպրական եւ թուրք կիպրական տեսակետները իրարմէ բոլորովին տարբեր են, սակայն ան յայտնած է, որ խաղաղութեան բանակցութեանց երեք շաբթուան դադարը կրնայ առիթ տալ տարակարծութիւնները նուազեցնելու:

Տենքթաշ Ուրբաթ օր ժողով մը գումարած է Կիպրոսի նախագահ Կիպրոս Քլեքիտէի հետ, Յունուարին սկսած իրենց հերթական ժողովներուն ժրէքն ներս, Դեկտեմբերին առաջ անել կազմութեան լուծումը գտնելու առաջադրութեամբ: Դեկտեմբերին Ե. Միութիւնը որոշում պիտի տայ Կիպրոսի անդամակցութեան գծով:

Տենքթաշ ըսած է, որ բանակցութիւնները մինչեւ Օգոստոս 27 կանգ պիտի առնեն, երկու կողմերուն առիթ տալով, որ յառաջիկային գնահատուող կատարեն:

Միւս կողմէ, ՄԱԿի յատուկ պատուիրակ Ալվարո Տէ Սոթո Ուրբաթ օր յայտնած է, թէ յաւատեն է՝ ինչ կը վերաբերի Կիպրոսի գծով նուաճումի մը արձանագրութեան:

Ան ըսած է, որ բանակցութիւնները սքանչելի առիթ մըն են հարցը լուծելու եւ արտօնելու երկու համայնքներուն, որ Կիպրոսի Ե. Միութեան անդամակցութեան արդիւնքը քաղեն:

Տէ Սոթո խոստովանած է, որ բանակցութիւնները անհրաժեշտ ձեւով չեն ընթացարար, առանց սակայն մանրամասնութիւններ տալու:

ԹՈՒՐԲԻԱ

ՀԱՏՔՓԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ Է

ՏԻՍՐՊԵՔԻՐ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ քրտական գլխաւոր կուսակցութեան՝ ՀՍԷՓի հետ կապեր ունեցող փաստաբան մը Հինգշաբթի օր գլուխին արձակուած փամփուշտով մը սպաննուած է Տիարպէքիի մօտակայ Ենիշէ-հիր շրջանին մէջ գտնուող իր տան շէնքին մէջ, յայտնած է թրքական ոստիկանութիւնը, Ուրբաթ օր:

Ոստիկանութիւնը քննութիւն բացած է Ռեճէփ Ալիօղլուի սպանութեան շուրջ, ստուգելու համար, թէ անիկա արդէ՞ք քաղաքական զրդայապաշտաններով է:

Միւս կողմէ, թրքական ապահովութեան ուժերու երկու անդամներ սպաննուած են այլ ղէպքի մը ընթացքին, որ նոյնպէս տեղի ունեցած է հարաւարեւելեան Թուրքիոյ մէջ: Ոստիկանները ՔԱԿի անդամ ըմբոստներու հետ բախում ունեցած են:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ...

Շարունակուած 3րդ էջէն

րունակել առանց առողջ քաղաքական մթնոլորտի, կառավարման ծրագիրի եւ տնտեսական յստակ ու թափանցիկ ուղիի:

Միջազգային գետնի վրայ, թերթերը գրած են, թէ ձորձ Պուշ շղայնացած է երուսաղէմի Երրայական համալսարանին մէջ 5 ամերիկացիներու սպանութեան պատճառով: Պուշ Յորդանանի թագաւորին հետ տեսակցութեան ընթացքին վերահաստատեց Սատտամ Հիւսէյնի վարչակարգը տապալելու վճռականութիւնը: Իրաք համաձայնութիւն յայտնեց, որ ՄԱԿի քննիչներու ղեկավարը Պաղտատ այցելէ եւ պատահանատններուն հետ բանակցութիւններ վարէ, գրած է թերթը:

Ըստ «Տիարա»ի, նախագահ Ասատ յայտարարեց.- Իւրայեղի պատմութիւնը արարներու դէմ կազմակերպուած ջարդերու շրջալ մըն է. Իւրայեղ այսօր այ կը շարունակէ նոյն ընթացքը եւ խաղաղութեան բոլոր փորձերը կը ձախողեցնէ:

«Պայրաթ» գրած է, թէ Պաղեստինի ժողովուրդին 60 առ հարիւրէն աւելին դժուարութիւն ունի օրուան հացը ձարելու:

Միջազգային իրադարձութիւններուն մասին խօսելով «Մուսթաքպաթ» գրած է. «Ժենիւի գաղթականի ղէպերուն մասին ՄԱԿ իրապարակեց կողմնակալ տեղեկագիր մը, որ կազմակերպուած ջարդերը յստակօրէն չեն նշուիր եւ չեն ճարտարապետութեան մակարդակի վրայ կը դրուին. պաղեստինցիները խոր դժգոհութեամբ ընդունեցին տեղեկագիրին կողմնակալ բովանդակութիւնը:

Ամերիկեան եւ եւրոպական սակարաններուն մէջ արժեքուողները մեծ նահանջ արձանագրեցին՝ Ամերիկայի տնտեսութեան մասին ոչ քաջալերական տուեալներու իրապարակումէն ետք:

ՂԱԶԱԽՍԱՆ

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐ ՄԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱԻ

ԱԼՄԱԹԻ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Ղապախ ընդդիմադիր ղեկավար Կալիմուս Ճաքիանով, որ նախագահ Նուրուլլահի Նապարպայեի խիստ քննադատներէն է, Ուրբաթ օր 7 տարեկան բանտարկութեան դատաւարատուած է՝ իր պաշտօնը չարաշահած ըլլալու յանցանքով, կառայարից եղած օրերուն:

Փոքր, սակայն բարձրաձայն արտաւայտուող ընդդիմադրութիւնը եւ օտար դէտեր յայտնած են, որ դատավարութիւնը պատ մտածողութիւնը ճշգրտելու այլ ցուցանիշ մըն է երկրին մէջ:

Ռուսական «Վրեմյա Նովոսթի» օրա-

թերթին Կեդրոնական Ասիոյ մասնագետ Արգատի Տուպիով յայտնած է, որ նախագահը կը թուի իր ընտրանքը կատարած ըլլալ ո՛չ միայն ի նպատակ բողջատիրական «մոտէյի» մը, այլեւ՝ դրական թուրքմենիստանի «մոտէյի» համաձայն, դիտել տալով, որ հոն ո՛չ ոք կը յանդգնի ղեկավարին առարկութիւն ընել:

Ճաքիանով անցեալ Նոյեմբերին հիմնած է Ղապախստանի Ժողովրդավար Ընտրանք շարժումը, որ բոլորին համար առեւտրական առիթներ եւ ժողովրդավարութիւն կը քաջալերէ: Անիկա շուտով պայրացուած է Նապարպայեի:

39 տարեկան գործարար Մարտին միջազգային լուսարձակները իր վրայ դարձուցած էր, երբ առեւտրական մայրաքաղաք Ալմաթիի մէջ ֆրանսական դեսպանատունը սպաստանած էր՝ խուսափելու համար ձերբակալութենէ:

Ան այս շաբաթսակիկին յայտնած է, որ առեւտրական «նախագահի» մէկ իրահանգին կ'ենթարկուի՝ եւ թէ ինք որեւէ գուրջակցութիւն չ'ակնկալէր:

Ան նաեւ դատավարութիւնը նկատած է քաղաքական վրէժի արարք մը՝ Նապարպայեի կազմակերպութեամբ, հետպիտէ թափ ստացող ըմբոստութեան վերջ տալու համար:

ՏԱԾԻԿԻՍՏԱՆ ՅՈՒՍԱԽԱԲ՝ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԷՆ

ՏՈՒՇԱՆՊԷ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).- Երբ Մ. Նահանգներ Տաճիկիստանի սահմանապահ պինտորներուն 8 միլիոն տոլար առաջարկած է՝ Աֆղանիստանի հետ տագնապալի սահմանին պաշտպանութեան համար, անոնց հրամանատարը երապած է համակարգիչներ, ինքնաշարժներ եւ ռատիոներ գնելու մա-

սին՝ թափ տալու համար ապահովութեան:

Սակայն Սեպտեմբեր 11ի յարձակումներէն շուրջ 10 ամիս ետք, Ապտիւռահմանով Ապիմով յուսալից է եւ կ'ըսէ, թէ ստացած է միայն 60 հեռադիտակներ:

Ան յայտնած է, որ Մ. Նահանգներ եւ Տաճիկիստանի կառավարութիւնը լքած են սահմանապահ ուժերը, բացատրելով, որ իր երկրին կառավարութիւնը որեւէ օժանդակութիւն չի յատկացներ, որովհետեւ կ'ըսէ, թէ Ուաշինկթըն օժանդակութիւն խոստացած է:

Տուրքմենի մէջ ամերիկեան դեսպանատան մէկ բանքերը հաստատած է, որ հեռադիտակները յանձնուած են: Ապրիլին անիկա երկար հաղորդագրութեան մը մէջ քաջատրած է, որ հեռադիտակները յանձնուած են, աւելցնելով, որ Ուաշինկթըն այս եւ յառաջիկայ տարիներուն քանի մը միլիոն տոլար պիտի տայ սահմանապահ ուժերուն:

Սակայն այս շաբաթավերջին բանքերը որեւէ տեղեկութիւն չունէր, թէ ծրագիրը ե՞րբ պիտի սկսի: Տաճիկիստան - Աֆղանիստան սահմանագիծը 1340 քմ. երկարութեամբ է եւ անիկա մարդոց եւ թմրեցուցիչներու մաքսանենցութեան համար նախասիրութիւն վայելող ճամբան է՝ դէպի Ռուսիոյ եւ Եւրոպայի շահաբեր շուկաները:

ՃԱՏՐԱԿԻ ԽՆԳԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

- 1. 1.Ձxf5+ gxf5 2.Պg5# 1-0
2. 1.Պxf7+ Փh8 2.Ձg6# 1-0
3. 1...Պxc3+2.Փb1 Պb2# 0-1
4. 1.Ձh8 Ձc3 [1...Ձc5 2.Ձc3#; 1...Ձd2 2.Ձd3#; 1...Ձe3 2.Ձe3#; 1...Ձxf4 2.Ձxf4#; 1...Ձb2 2.Ձe3#; 1...Ձd3 2.Ձd3#; 1...Ձd4 2.Ձf6#; 1...Ձxd5 2.Ձxd5#] 2.Ձxc3#

Advertisement for Galerie Vanlian & Home Trends featuring a wedding list and a couple in a romantic setting. Text includes 'Wedding lists at Galerie Vanlian you will surely lose your mind...' and 'Galerie Vanlian & HOME TRENDS'.

Advertisement for Panasonic featuring a contest to win L.L. 70,000,000. Text includes 'IT'S Panasonic SUMMER-TIME AGAIN!', 'Win With Us L.L. 70,000,000', and '280 PRIZES including: 34" TVs, DVD Mini Components, 29" TVs, 15" TVs and Radio Cassette Recorders'.

Advertisement for HALCO featuring various mechanical parts. Text includes 'HALCO ՄԵԼՔՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ', 'ELECTRIC MOTORS, REDUCTION GEAR, MOTORS A. C. & D. C., REDUCTION GEARS, VACUUM PUMPS, WATER PUMPS, POWER TOOLS, ELECTRIC WINCHES, PNEUMATIC WINCHES, STAINLESS ELECTRODES', and 'PNEUMATIC DIRECTIONAL VALVES, SOLENOID VALVES, HYDRAULIC DIRECTIONAL VALVES, SOLENOID VALVES, RELIEF VALVES, PUMPS & PISTONS'.